

**«Հայաստանի Հանրապետության կառավարության
2004 թվականի հոկտեմբերի 7-ի N 1398-Ն որոշման
մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի
Հանրապետության կառավարության որոշման
նախագիծ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

_____ 201_ N ____-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի N 1398-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 7-ի «Եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկերի վճարումից խուսափելը կանխելու մասին Հայաստանի Հանրապետության գործող միջազգային համաձայնագրերի որոշ դրույթներ կիրառելու մասին» N 1398-Ն որոշման N 1 հավելվածում կատարել հետևյալ լրացումները՝

1) 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Ռեզիդենտության տեղեկանք է համարվում նաև օտարերկրյա պետության իրավասու մարմնի կողմից վարվող էլեկտրոնային համակարգից արտաձված փաստաթուղթը, եթե այն համապատասխանում է սույն կետի առաջին պարբերությամբ սահմանված պահանջներին: Այն դեպքում, երբ օտարերկրյա պետության ներքին օրենսդրության կանոններին համաձայն տրամադրված ռեզիդենտության տեղեկանքը (այդ թվում՝ նաև էլեկտրոնային եղանակով) չի համապատասխանում սույն կետի առաջին պարբերությամբ սահմանված պահանջներին, Հայաստանի Հանրապետության հարկային մարմինը կարող է ճշտել այդ փաստաթղթի իսկությունը՝ համապատասխան օտարերկրյա իրավասու մարմին հարցում կատարելու միջոցով:».

2) 4-րդ կետը «ստորագրությամբ» բառից հետո լրացնել «, բացառությամբ այն դեպքերի, երբ ռեզիդենտության փաստը հիմնավորվում է էլեկտրոնային համակարգի միջոցով» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Կ. Կարապետյան